

Հետագային, Հռոմեական կայսրության շրջանին, նշանաւոր դարձան նաեւ հետեւեալ երկու փիլիսոփաները.-

- **Փիլոն Ալեքսանդրացի** (յուն.՝ *Phílôn*, մօտ. 20 մ.թ.ա. – 50 թ.), Պլատոնէն մեծապէս ազդուած հրեայ փիլիսոփան, առանց անտեսելու գործնական կեանքի առաջադրանքները, կը գերադասէր աստուածիմաստութեան ու աստուածոտեսութեան նպատակները (տե՛ս Էջ 50):
- **Պլոտինոս** (յուն.՝ *Plôtinos*, 205 – 270 թ.), որ **Նոր-Պլատոնական**^[Ծ-41] (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան հիմը դրաւ եգիպտական Ալեքսանդրիոյ⁴ նշանաւոր դպրոցին՝ (Museion) մէջ, ապա այս նոր ուղղութիւնը փոխադրեց Հռոմ: Պլոտինոս եւս մեծ կարեւորութիւն տուած է աստուածիմաստութեան ու աստուածոտեսութեան (տե՛ս Էջ 66):

Հին Դարաշրջանի վերջաւորութեան (մ.թ.ա. 100 մինչեւ մ.թ. 400 թ.) սկսած աստուածիմաստութեան գլխաւոր նպատակը եղած է՝ աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան համադրութիւնը:

Աստուածաբանութեան (Theology) եւ փիլիսոփայութեան (Philosophy) համադրութիւնը, սակայն, թե՛ վերոյիշեալ ժամանակաշրջանին (Հին Դարաշրջան) եւ թե՛ անկէ ետք եւ մինչեւ այսօր, այնքան ալ հեշտ չէ եղած, ինչպէս պիտի տեսնենք:

Միջին Դարաշրջան

Եւրոպայի մէջ, Միջնադարեան փիլիսոփայութիւնը անքակտելիօրէն կապուած է Քրիստոնէութեան, այն աստիճան որ ժամանակաշրջանը կոչուած է նաեւ *Քրիստոնեայ Միջնադար* (տե՛ս **Մաս-3**, Էջ 94):

Ինչպէս Հին Դարու վերջաւորութեան, Միջնադարու առաջին շրջանին եւս, կը շարունակուին աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան համադրութեան լուրջ աշխատանքները: Արդէն կազմուած էր «աստուածիմաստութիւն» (theosophía) եզրոյթը: Այս ժամանակաշրջանին *Եկեղեցւոյ Հայրերը* կը քննարկէին դիտումի կամ հայեցողութեան նիւթերը, որոնք առնչուած էին՝ *աստուածիմաստութեան* եւ *աստուածոտեսութեան*: Անոնք ընդհանրապէս համաձայն էին, որ այս երկրային կեանքի ընթացքին, ասդենականի մէջ, մարդոց համար կատարեալ ու ամբողջական աստուածիմաստութիւնը կամ աստուածոտեսութիւնը բոլորովին անհնար է, բայց կարելի է Աստուծոյ մասին սահմանափակ ձեւով խօսիլ:

Միջնադարու փիլիսոփաները, ընդհանրապէս աստուածաբաններ եղած են. իսկ ժամանակաշրջանը կարելի է բաժնել երկուքի.-

- **Հայրաբանական շրջանը** (Patristics), ուր հանրաձանօթ ու ազդեցիկ աստուածաբան փիլիսոփայ մըն է՝ հռոմեացի **Աւրելիոս Օգոստինոսը** (Երանելի, Aurelius Augustinus, 354 - 430 թ.), ապա՝

4 Ալեքսանդրիոյ (եգիպտական քաղաքին) եւ իր նշանաւոր Ալեքսանդրիոյ դպրոցին (Museion) մասին տե՛ս **Մաս-2**, Ա. Գլուխը, Էջ 40: